ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱ՞Ն, ԹԵ՞ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ

Միրակ Հովհաննիսյան[*]

Քաղաքակիրթ հասարակությունների արևմտյան մոդելի զարգացմանը բնութագրական են հետևյալ հատկանիշները. պատմական լավատեսությունը, ավանդապաշտությունից արդիականացման գործընթացներին անցումը, համաշխարհային տնտեսությանն ինտեգրվելու ձգտումը, ժողովրդավարացումը, օրենքի իշխանության գերակայությունը, հոգևոր կյանքի ապակենտրոնացումը և այլն: Սակայն հասարակական կյանքի արդիականացման հիշյալ հայեցակարգի գործադրումը միանշանակ չընդունվեց ոչ միայն Արևմուտքում: Արդիականացման նման, կարելի է ասել՝ ուղղագիծ բնույթը XXդ. 60-ական թթ. Արևմուտքում և այլ տարածաշրջանների երկրներում քննադատության մեծ ալիք առաջ բերեց: Հասարակագիտական և քաղաքագիտական շրջանակներում աստիճանաբար սկսեցին գիտակցել քաղաքակրթական բարդ գործընթացների երկու պարզ աստիճանների առանձնացման հետևանքով (ավանդական և արդիականացման) միջքաղաքակրթական տարբերությունների նման բնութագրումների պարզունակությունը: Փոփոխությունները կարող են հանգեցնել տեխնիկական առաջընթացին և մենեջերական կառավարման կատարելագործմանը, բայց ոչ՝ աշխարհընկալման, հավատի, «կյանքի կոդի» ունիվերսալացմանը: Այլ կերպ ասած՝ իրականությունը պահանջում է առավել համակողմանի և համարժեք խոր վերլուծություն: Այսինքն՝ գիտակցվեց, որ «պրոգրեսիվ արդիականության» գծային մոդելը գրեթե անիրագործելի է:

Քաղաքակրթական փոխակերպումների և սոցիալական կյանքի արդիականացման փորձը ցույց է տալիս, որ անհրաժեշտ է անպայման հաշվի առնել աշխարհի նաև մշակութային բազմազանությունը և նյութական խնդիրների լուծման արևմտյան մեթոդների, միջոցների ոչ պարտադիր լինելը, պատմական զարգացման տարաբնույթ փաստերը, մշակութային յուրահատկությունները, հոգեկերտվածքի առանձնահատկությունները և այլն: Պատահական չէր, որ Ն.Սմելզերը, Ջ.Նետլը, Ռ.Ռոբերտսոնը, Գ.Գուլֆիդը, որոնց գիտական համ-

[*] ՀՊՃՀ հումանիտար գիտությունների և լեզվի ֆակուլտետի պատմության և քաղաքագիտության ամբիոնի վարիչ, քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ:

բավը մեծապես կապված է ավանդապաշտության խնդիրների վերլուծության հետ, հենց ավանդույթների և տեղային առանձնահատկությունների հաշվառման անհրաժեշտությունից ելնելով սկսեցին ուսումնասիրել նաև զարգացող երկրների խնդիրների լուծման ուղիները:

Նրանք ներկայացրին խնդրի նոր ձևակերպում, որի համաձայն՝ համաշխարհային պատմությունը ոչ թե «բարեգործությունների էվոլյուցիա է», այլ դաժանագույն աղետների անվերջանալի շղթա, որի հետևանքով նաև ներկա փուլում ոչ արևմտյան տարածաշրջանները սահուն կերպով ներգրավվում են Արևմուտքի ընդլայնվող շրջագծի մեջ: Պետք է նկատել, սակայն, որ սոցիալիստական ճամբարի փլուզումը սկզբունքորեն փոխեց արևմտյան քաղաքակրթության հարացույցերի նկատմամբ վերաբերմունքը: Որպես առավել իրական ապագա, կրկին առաջին պլան մղվեց հասարակական, քաղաքական, տնտեսական հարաբերությունների արևմտյան մոդելը: Համընդհանուր արժեքների գաղափարական և նյութական փոխկախվածությունը կրկին դիտարկվեց որպես քաղաքակիրթ աշխարհի հիմնական բնութագրիչ: Արևմուտքը նորից զգաց տնտեսական, գաղափարական, բարոյական նոր վերելքի կարիք:

Ակնհայտ է, որ գլոբալացման մի ամբողջ շարք գործընթացներ անմիջականորեն ազդում են գիտակցության ճգնաժամի խորացման վրա: Այդ գործընթացները (ժողովրդավարությունը, տնտեսակենտրոնությունը, ինֆորմատիզացիան, մշակութային ստանդարտացումը, արժեքային ունիվերսալացումը և այլն) անխուսափելիորեն բախվում են համաշխարհայնացմանը խոչընդոտող այնպիսի գործընթացների հետ, ինչպիսիք են ազգային ինքնությունն ու նույնականությունը: «Յուրաքանչյուր քաղաքակրթություն ներկայացնող մարդիկ, անկախ իրենց սոցիալական դիրքից, օժտված են բնավորության ընդհանուր գծերով, որոնք կազմում են անգիտակցական ժառանգություն և փոխանցվում են նախնիներից: Այս տեսանկյունից ժողովուրդների և մշակույթների ճակատագրերը շատ ավելի մեծ չափով ղեկավարում են մեռած, քան կենդանի սերունդները, քանզի նրանց կողմից են դրված քաղաքակրթության հիմքերը» [1, c. 254]:

Ժամանակակից հասարակությունները կանգնած են քաղաքակրթությունների մարտահրավերներին պատասխանելու խնդրի առջև: Նման ռազմավարությունների որոշ տարբերակներ արդեն նկատելի են: Մասնավորապես, այսպես կոչված՝ տեղեկատվական իմպերիալիզմը, որը փորձում է մյուս ժողովուրդներին արևմտյան մշակույթը պարտադրել, ամենուրեք արժանանում է հզոր հակազդեցության: Ազգայնականության և կրոնական արմատականության աշխուժացումը քաղաքական վերլուծաբանները մեկնաբանում են տարբեր կերպ: Մի մասը դրանում տեսնում է քաղաքակրթական ինքնագիտակցության ակտիվացում և փաստում, որ դասակարգային և գաղափարախոսական կոնֆլիկտներն աստիճանաբար փոխարինվում են ազգայինով և

կրոնականով (Ս.Հանթինգթոն), մյուս մասը, ընդհակառակը, ենթադրում է, որ ապակառուցողական միտումները և էթնոկրոնական կարծր ավանդապաշտության ռազմավարությունը ձախողվում են: Գլոբալացումը ջնջում է ներքին և արտաքին քաղաքականության միջև սահմանները, ինչը լրջորեն սահմանափակում է ազգային նույնականության դրսևորման և գործառնության շրջանակները՝ այն կախվածության մեջ դնելով ժողովրդավարական մեխանիզմներից և ինստիտուտներից, որոնք, ընդ որում, նույնպես գլոբալացման միտումներ ունեն: Բացի այդ, համաշխարհային տնտեսական համակարգի և շուկայի ձևավորման գործընթացների միջոցով գլոբալիզմը սահմանափակում է ազգային ինքնության և նույնականության գործառույթների ակտիվ դրսևորումները, ինչն էլ մեկուսացվածության վրա հիմնված ազգային անվտանգության և ազգային զարգացման մոդելները դարձնում է ոչ կենսունակ: «Ավելին, ինտեգրումը դառնում է ազգային շահերի պաշտպանության միակ հնարավոր միջոցը: Հրաժարվել ինտեգրումից՝ նշանակում է հրաժարվել լիարժեք զարգացումից: Ոչ մի հասարակություն չի կարող լինել մրցունակ՝ չդառնալով համաշխարհային տնտեսական զարգացման մաս: Այս գործոնը, բացի մնացյալից, որոշում է ազգային զարգացման ապահովման աշխարհատնտեսական մեխանիզմների առաջնահերթությունը՝ աշխարհաքաղաքական ռազմավարությունների նկատմամբ, քանի որ հենց աշխարհատնտեսությունն է դառնում համաշխարհային զարգացման հիմնական հարացույցը: Այդպիսի ինտեգրումը մի շարք դեպքերում տանում է ազգային նույնականության «լվացմանը», նրա տարրալուծմանը էկոնոմիզացիայի գործընթացում» [2, c. 116]:

Ինտեգրում ասելով սովորաբար ընկալվում է որոշակի արժեքների մերձեցման և փոխներթափանցման հիման վրա ընդհանուր տարածության (քաղաքական, տնտեսական, հասարակական, արժեքային) ձևավորում, որը միջազգային համընդհանուր արժեքները հանգեցնում է մշակութաքաղաքակրթական հիմքերի ընդլայնմանն ու հարստացմանը:

«Ինտեգրումը միաժամանակ ենթադրում է նոր ազգային հասարակությունների կողմից արևմտյան բազային արժեքների ներմուծում: Ժամանակակից արևմտյան քաղաքակրթությունը խարսխված է անձի ազատության, մասնավոր սեփականության պաշտպանության, օրենքի գերակայության, ձեռներեցության ազատության, քաղաքական բազմակարծության, փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության, կրոնական ազատության և նմանատիպ այլ համակարգաստեղծ արժեքների վրա: Ընդ որում, ցանկացած հասարակություն, որում գործում են այս ինստիտուտները, կարող է համարվել արևմտյան՝ անկախ նրանից, թե աշխարհագրորեն որտեղ է տեղակայված և ինչ մշակութային արմատներից է սերում» [3, c. 221]:

Ինֆորմատիզացիան, ձևավորելով միասնական համաշխարհային տե-

ղեկատվական տարածություն և ստեղծելով գլոբալ ցանցային հասարակություններ, նպաստում է նյութական և հոգևոր բարիքներից օգտվելու քաղաքացիների հնարավորությունների ընդլայնմանը, բազմապատկում է ինտելեկտուալ ռեսուրսները՝ նպաստելով անձի կայուն զարգացմանը: Միևնույն ժամանակ, տեղեկատվական տեխնոլոգիաները չեն կարող հանդիսանալ միայն բացարձակ բարիք, քանի որ նպաստավոր պայմաններ են ստեղծում զանգվածային գիտակցության վերահսկողության և մանիպուլյացիայի համար: Միջպետական դիմակայության շրջանակներում զանգվածային տեղեկատվական միջոցները հանդիսանում են ազգային հանրույթների (հասարակությունների) գիտակցության վրա ազդելու միջոցներ՝ առաջացնելով նոր սպառնալիքներ՝ ազգային նույնականության պահպանման համար: Բացի այդ, գլոբալ տեղեկատվական հոսքերն օբյեկտիվորեն հանգեցնում են մարդու անհատականության «լվացմանը»: Մշակութային ստանդարտացումը, ինչը տեղեկատվական ազատականության հետևանք է, պայթեցնում է երբեմնի պարփակված ազգային մշակութային կյանքը, և գլոբալացման հուժկու գործընթացները մեկընդմիշտ քանդում են քաղաքակրթությունների միջև նախկինում առկա անխախտելի թվացող պատնեշները՝ նրանց ներգրավելով համաշխարհային մրցակցության շրջապտույտի մեջ: Հարկ է նկատել, որ գլոբալացման ամենաբացասական հետևանքներից մեկն էլ այն է, որ զարգացած պետությունների համար ստեղծում է մեկնարկային առավելություններ և հավերժացնում է զարգացող երկրների նկատմամբ նրանց հենց այդ առավելությունները, ինչն իր հերթին խոչընդոտում է ազգային կյանքի արդիականացման ծրագրերին: Գլոբալացումը ձևավորում է այնպիսի աշխարհակարգ, որում առաջիկա տասնամյակներում գոյություն կունենան «հարուստ հյուսիս» և «աղքատ հարավ»: Ընդ որում, «հարավը» կգտնվի համաշխարհային զարգացման ծայրամասում («տնտեսական մեկուսատեղի»), որտեղ անհույս են դառնում ազգային կյանքի արդիականացման ծրագրերի հաջող իրականացմանը նպաստող բոլոր փորձերն ու ձգտումները: Մինչդեռ արդիականացման հաջողություններն ուղղակիորեն կապված են ազգային նույնականության ճգնաժամի հաղթահարման հետ, քանի որ այդպիսի արդիականացումը որոշում է այս կամ այն երկրների զարգացման քաղաքակրթական ուղղվածությունն ու մակարդակը: Թերևս, առկա է նաև հակառակը. արդիականացման մասշտաբային խնդիրներ լուծող հասարակությունների համար ազգային-քաղաքակրթական ինքնորոշումը հանդիսանում է վճռորոշ գործոն՝ որոշելու նրանց զարգացման մոդելը և, վերջին հաշվով, ազգային կյանքի արդիականացման հաջողությունը:

Արդիականացման գործընթացը Վ.Ֆեդոտովան դիտարկում է որպես «նոր ինստիտուտների և հարաբերությունների, արժեքների և նորմերի ստեղծման գործընթաց, որը պահանջում է արդիականացվող հասարակության

մարդկանց նույնականության որոշակի փոփոխություններ» [4, c. 15]: Մինչդեռ Վ.Պանտինը և Ի.Սեմենենկոն գտնում են, որ «նոր, ժամանակակից նույնականության («ժամանակակից նույնականություններ») ձևավորման գործընթացներն ուղեկցվում են արդիականացման հրամայականների և մշակութային ինքնատիպության հիմքերի պահպանման հրամայականների օրինաչափ համակցման, մշակութային որոշակի ժառանգականության ուղիների և մեթոդների որոնմամբ» [4, c. 15-16]:

Այսպիսով, գլոբալացումը, նպաստելով տարբեր սոցիալական և էթնիկ հանրույթների մերձեցմանն ու ինտեգրմանը, միևնույն ժամանակ ուժեղացնում է սեփական մշակույթի և քաղաքակրթական նույնականության որոնման պահանջը:

Գլոբալացման վերաբերյալ վեճերն առավել սուր ձևեր են ընդունում, երբ խոսքը վերաբերում է ազգային պետությունների ճակատագրերին: Թերևս, բոլոր հետազոտողները համակարծիք են այն հարցում, որ գլոբալացումը նեղացնում է ազգային պետության իրավասությունների շրջանակը, սակայն այդ երևույթի մասշտաբները նրանք գնահատում են տարբեր կերպ: Օրինակ, նշվում է, որ ազգային պետությունները վերափոխվում են գլոբալ տնտեսության «շարժափոկերի» և իրենց գործառույթներով նմանվում մունիցիպալիտետների՝ ապահովելով բիզնեսի համար անհրաժեշտ ենթակառուցվածքներ: Արդյոք դա այդպե՞ս է: Իրականում որքա՞ն է տուժում պետական ինքնիշխանությունը (սուվերենությունը): Կանգ կառնի՞ արդյոք այդ գործընթացը, թե՞ կշարունակվի՝ հասնելով իր տրամաբանական ավարտին՝ միանշանակ պատասխան տալ, իհարկե, դժվար է:

Սակայն կարելի է ամենայն վստահությամբ փաստել, որ գլոբալացման պայմաններում ինքնիշխանությունը կորցնում է իր դասական բնութագրիչները: Այսօր իշխանությունը, ինչպես հետժամանակակից, այնպես էլ ծայրամասային հասարակություններում ունակ չէ բացարձակ ինքնուրույն գործողությունների: Թույլ պետությունները կամ համաձայնվում են գլոբալացման առաջադրած պահանջներին, կամ էլ փորձում ընթանալ նրան հակառակ: Գլոբալացումը, ինչպես նշում է Զ.Բժեզինսկին «Գլոբալ գերիշխանություն կամ գլոբալ լիդերություն» գրքում, այդպիսի երկրներին առաջարկում է խթանների «խառը հավաքածու»: «Մի կողմից՝ այն ստեղծում է տնտեսական աճի, արտերկրյա կապիտալի ներհոսքի և համատարած աղքատության աստիճանական հաղթահարման համար անհրաժեշտ հնարավորություններ, մյուս կողմից (ոչ հազվադեպ)՝ նպաստում զանգվածային անկարգությունների տարածմանը, տնտեսական և հոգևոր-մշակութային արժեքների նկատմամբ ազգային վերահսկողության թուլացմանը և սոցիալական շահագործմանը: Ծայրամասային հասարակություններում բավական արագ զարգացող կապիտալիզմը

քանդում է ավանդական հարաբերություններն ու դրանք մարմնավորող սոցիալ-ինստիտուցիոնալ կապերը» [5, c. 160-163]:

Ժամանակակից համաշխարհային հանրությունը կազմված է երեք խումբ պետություններից: «Առաջին խմբի մեջ են մտնում Հյուսիսային Ամերիկայի, Արևմտյան Եվրոպայի և Արևելյան Ասիայի բարձր տեխնոլոգիական հետարդյունաբերական երկրները, որոնք մեծ քայլերով հեռանում են աշխարհի ազգայնական-ավանդապաշտական մեծամասնությունից: Նրանց գաղափարախոսական նշանաբանն է՝ շուկա և ժողովրդավարություն, իսկ արդիականացումը ազգային կյանքի հաստատունությունն է:

Երկրորդ խմբի մեջ են այն պետությունները, որոնցում թեև գոյություն ունեն գլոբալացման հենակետեր, բայց բնակչության մի հսկայական զանգված շարունակում է ապրել և գործառնել ավանդական հասարակության արժեքներով և մշակույթով: Այս առումով, տվյալ խմբի յուրաքանչյուր պետության սոցիում սոցիալ-տեխնիկական նորարարությունների և ավանդական արժեքների միջև ներքին սուր կոնֆլիկտի մի յուրահատուկ համակարգ է: Արևելյան Եվրոպայի, Լատինական Ամերիկայի, Ասիայի նման երկրների հասարակություններին բնորոշ են պարբերաբար ծագող սոցիալ-տնտեսական ճգնաժամերը: Այս պետություններում իրավիճակի դրամատիզմը մեծապես պայմանավորված է «երկու ճշմարտությունների» (արդյունաբերական քաղաքակրթության արժեհամակարգի և ավանդական-պատմամշակութային արժեհամակարգի) բախմամբ:

Երրորդ խումբը կազմված է այն պետություններից, որոնցում գերակշռում է ավանդապաշտական ազգային տարրը՝ կրոնը, կենսակերպը, բարոյական նախապատվությունները, ընդհանուր առմամբ այն, ինչն առանձնացնում է տվյալ էթնոսը մյուսներից: Այս հասարակություններում ազգայնականությունը հանդիսանում է սոցիալական շարժումների և փոփոխությունների գլխավոր շարժիչ ուժը» [6, c. 176-178]: Հարկ է նկատել, որ ազգայնական գաղափարների վերելքի և տարածման միտում է նկատվում նաև Եվրամիության որոշ երկրներում:

«Վաղուց արդեն Եվրոպայում կոմունիզմի ուրվականը չի թափառում, հմայքն ու ազդեցությունը կորցրել է նաև արևմտյան ազատականությունը,- նշում է Վ.Մաքսիմենկոն,- սակայն այդ անցած գաղափարախոսություններին XX դարի վերջերին փոխարինելու եկավ նոր համաշխարհային գաղափարախոսական նախագիծ՝ գլոբալացումը, որը ծնեց «համաշխարհային հանրության» տեսիլքը, և այս քաղաքական-գաղափարախոսական կարծրատիպն այժմ արդեն միջազգային պրակտիկայում գրեթե դարձել է նորմատիվային, թեև այն չի ենթադրում մարդկանց և ժողովուրդների համամոլորակային հանրություն:

Չնայած աշխարհը մի շարք տեխնոլոգիական հեղաշրջումների արդյուն-

քում տեխնիկական և հաղորդակցական առումով դարձել է առավել համապարփակ, հասանելի, սակայն մշակութային, ազգային, կրոնական հարաբերություններում, ինչպես նաև տարբեր երկրներում տնտեսական վերարտադրության պայմանների խոր տարամիտումների տեսանկյունից այն դարձել է ավելի ու ավելի ոչ միասնական» [7, c. 29]:

Այսպիսով, գլոբալացման բազմավեկտոր, բազմաշերտ և արդիականացման գործընթացները չպետք է խաթարեն Հայաստանում (Արցախում) և Սփյուռքում հայության ինքնության, նույնականության դիմագիծը, և հնարավոր բոլոր ճկուն մեխանիզմներով հարկավոր է ապահովել ազգային հոգևոր-մշակութային արժեհամակարգի հարատևությունը նաև գալիք դարերում:

Մարտ, 2011թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Василенко И.А.,* Политическая глобалистика, М., 2005.
2. *Кортунов С.,* Глобализация и «плюрализм смыслов», М., 2003.
3. *Тренин Д.,* Интеграция и идентичность. Россия «как новый запад», М., 2000.
4. *Братимов О., Горский Ю., Делягин М., Коваленко А.,* Практика глобализации: игры и правила новой Эпохи, М., 2003.
5. *Пономарева Е.,* Суверенитет периферийных обществ в условиях глобализации: Сербия и Черногория, Политическая наука, 2005, N 4.
6. *Уткин А.,* Глобализация: процесс и осмысление, М., 2001.
7. *В. Максименко,* Призрак глобализма, М., 2004.

ЦИВИЛИЗАЦИОННЫЕ ИЛИ ГЕОПОЛИТИЧЕСКИЕ ВЫЗОВЫ?

Сирак Оганесян

Резюме

В статье говорится о трудностях в связи с сопоставлением объективных и субъективных признаков развития цивилизованных обществ западной модели глобализации. Одновременно обсуждаются основные особенности, касающиеся межцивилизационных различий, сложных и противоречивых процессов двух видов – традиционных и модернистских. Отмечается также, что в цивилизационных преобразованиях и социальных модернистских процессах нужно иметь в виду социально-культурное разнообразие и особенности разных национальностей и стран.